

Արիստոտելի բարոյագիտութիւնը շարունակուեցաւ իր աշակերտներուն կողմէ, Արիստոտելի հիմնադրած Պերիպատոս (յուն.՝ peripatos = ճեմարան) կոչուած դպրոցին ճամբով:

Այնուհետեւ, Քրիստոնէութիւնը պլատոնեան չորս գլխաւոր առաքինութիւններուն եւ Հին Կտակարանի տասնաբանեայ պատուիրաններուն վրայ աւելցուց երեք հատ եւս.- *հաւատքը, յոյսը եւ սէրը*, որոնց հասնելու համար, կարիքը կայ՝ աստուածային ողորմածութեան: Վերոյիշեալ երեք քրիստոնէական առաքինութիւնները անմիջականօրէն առնչուած են՝ Աստուծոյ հետ.- հաւատք՝ Աստուծոյ հանդէպ, յոյս՝ Աստուծոյ ողորմածութեան հանդէպ եւ սէր՝ առ Աստուած:

Նոր Դարաշրջանի գերման փիլիսոփայ **Ի. Կանտ** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) եւս կը խօսի՝ *առաքինութեան ուսմունքի* (գերմ.՝ Tugendlehre, անգլ.՝ Virtue Doctrine) մը մասին. սակայն Կանտ այստեղ նկատի ունի՝ բանականութենէ յառաջացած պարտաւորութիւնը միայն, որ մեզ կը մղէ բարոյական *բարի* վարուելակերպի, չափանիշ ունենալով՝ *անպայմանական հրամայականը* (Categorical Imperative): Պարտաւորութեան այս անքակտելի կապին պատճառով Կանտի բարոյագիտութիւնը *առաքինութեան* տեսութիւն մը չէ, այլ՝ *պարտագիտական*, ինչպէս նշեցիք (Էջ 160):

Վերջին տասնամեակներուն, կարելի է նկատել, որ յունական հնադարեան փիլիսոփայութեան մէջ գերակշիռ արժէք ունեցող *առաքինութեան բարոյագիտութիւնը*, դարձեալ մեծ կարեւորութիւն կը ստանայ եւ ժամանակակից բարոյագետներու ուշադրութեան առարկայ կը դառնայ: Այս իմաստով, 20-րդ դարուն նշանաւոր դարձան՝ բրիտանացի բարոյագետ-փիլիսոփաներ՝ տիկին **Է. Անսկոմբը** (Elizabeth Anscombe, 1919 – 2001 թ.), տիկին **Փ. Ֆուտ** (Philippa Foot, 1920 – 2010 թ.), ինչպէս նաեւ **Ա. Մակ-Ինտայր** (Alasdair MacIntyre, *1929 թ.), եւ ամերիկացի բարոյագետ-փիլիսոփայ տիկին **Մ. Նուսսբաում** (Martha Nussbaum, *1947 թ.), որոնք կը նկատուին արդի առաքինութեան բարոյագիտութեան հիմնադիրները եւ ջատագովները:

Հնադարեան *առաքինութեան բարոյագիտութեան* զարթոնքը բոլորովին ալ զարմանալի չէ, քանի մը պատճառներով: Նախ կարելի է հաստատել, որ թէ՛ ա) պարտագիտական բարոյագիտութիւնը եւ թէ՛ բ) նպատակաբանական բարոյագիտութիւնը իրենց բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատեն մարդկային վարմունքները (առաջինի պարագային) եւ այդ վարմունքներու հետեւանքները (երկրորդի պարագային) ու իրենց հետաքրքրութեան տեսադաշտէն հեռացած Է՝ Նոյնինքն այդ վարմունքներու հեղինակ՝ անհատը կամ ենթական, նկարագրական իր բարի յատկանիշներով եւ զգացական աշխարհով: Ասիկա (այսինքն՝ անհատի կամ ենթակայի բացակայութիւնը), պատճառ կը հանդիսանայ, որ անտեսուի նաեւ՝ բարոյագիտութեան գլխաւոր իմաստը, որ խնդրոյ առարկայ անհատի կամ ենթակայի կողմնորոշումն իսկ Է՝ *լաւ ու բարի* կեանք մը վարելու եւ *երջանիկ* ըլլալու համար: